



**Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ  
Դիտարկումներ և առաջարկներ**

**«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ  
կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի առանձին կարգավորումների վերաբերյալ**

ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառության մեջ է դրվել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը:

1. Նախագծի 1-ին հոդվածը նախատեսում է դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանների դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքի դրույթաչափերի էական բարձրացում: Մասնավորապես, նախատեսվում է առանձին դեպքերում ընդհուպ հնգապատիկ բարձրացնել պետական տուրքի դրույթաչափը, նախատեսել բազային դրույթաչափի 10-ապատիկ, 20-ապատիկ, 30-ապատիկ դրույթաչափեր այն դեպքերում, երբ գործող իրավակարգավորումներով պետական տուրքի վճարում նախատեսված չէ:

Գտնում ենք, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով պետական տուրքի գործող դրույթաչափերի նման զգալի բարձրացումը պարունակում է անձի դատական պաշտպանության և դատարանի մատչելիության իրավունքի անհամաչափ սահմանափակման ուղղակի վտանգ:

Հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ Սահմանադրական դատարանի դիրքորոշումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ինչպես համաճարակային, այնպես էլ պատերազմական իրավիճակով պայմանավորված սոցիալ-տնտեսական ցուցանիշները, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը՝ ակնհայտ է, որ առաջարկվող իրավակարգավորումների արդյունքում անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակվում է այն կերպ կամ այն աստիճան, որ խախտվում է այս իրավունքի բուն էությունը:

**Առաջարկում ենք**

Հրաժարվել պետական տուրքի գործող դրույթաչափերի բարձրացմանն ուղղված բոլոր կարգավորումներից:

2. *Վարչական գործերով վարույթը.* Հաշվի առնելով վարչական գործերի առանձնահատկությունները՝ պետական տուրքերի դրույթաչափերի առավել քան երկու անգամ բարձրացումը՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով սահմանելը էականորեն ազդելու է քաղաքացիների կողմից պետական մարմինների ոչ իրավաչափ վարչարարության դեմ դատական պաշտպանության իրավունքի



# ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՐՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

իրացման վրա՝ նրանց դնելով ակնհայտ անհավասար և անբարենպաստ վիճակում:

Վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը թեթևացնելու համար անհրաժեշտ է ոչ թե բարձրացնել պետական տուրքի դրույքաչափը՝ դրանով իսկ խոչընդոտելով անձի իրավունքի իրացումը, այլ բարձրացնել վարչական մարմինների գործունեության արդյունավետությունը, այդ թվում՝ բարելավել հիմնավորված վարչական ակտեր կայացնելու ունակությունը:

Ավելին, նախագծով առաջարկվող փոփոխություններով պետական տուրքի վճարման արտոնություններից այլևս չեն օգտվելու վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշումները վիճարկող հայցվորները: Նմանատիպ փոփոխությունը սահմանափակում է անձանց՝ դատարան դիմելու հնարավորությունները պետական մարմինների կողմից կայացված վարչական իրավախախտումների մասին ակտերը բողոքարկելու նպատակով, այդ թվում, օրինակ, նվազագույն աշխատավարձի չափով (1000 ՀՀ դրամ) տուգանքի առնչությամբ, անձը պետք է վճարի նվազագույն աշխատավարձի քառապատիկի (4000 ՀՀ դրամ) չափով պետական տուրք, ինչը անհամաչափ է և հակասում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով և ՀՀ սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության և սեփականության իրավունքներին:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, մեծապես կարևորելով վարչական ակտերի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողությունը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության էական տարր, 2004 թվականի դեկտեմբերի 15-ին ընդունել է Վարչական ակտերի դատական վերահսկողության (2004)20 հանձնարարականը՝ սահմանելով, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի իրենց երկրի դատարանակազմությունը և դատական ընթացակարգերը համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջներին՝ երաշխավորելով վարչական ակտերի նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը:

Գտնում ենք, որ վարչական մարմինների դեմ ներկայացվող հայցերով, դատական ակտերի դեմ բողոքարկումներով նախագծով առաջարկվող դրույքաչափերի սահմանմամբ խախտվում է դատարանի մատչելիության իրավունքը այն աստիճան, որ խախտվում է այս իրավունքի բուն էությունը:

## **Առաջարկում ենք**

Չփոփոխել վարչական մարմինների դեմ ներկայացվող հայցերով պետական տուրքի դրույքաչափերը, ինչպես նաև վարչական իրավախախտման գործերով վարչական ակտերի բողոքարկման դեպքում հայցվորին պետական տուրք վճարելու պարտականությունից ազատելու վերաբերյալ կարգավորումը:

3. Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվում է սահմանել պետական տուրքի վճարման արտոնությունները. Գործող իրավակարգավորումներով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը հայցադիմում ներակայացնելիս նախատեսում է հայցագնի որոշակի տոկոսի պետական տուրքի վճարում, պետական տուրքի վճարումից

Հայաստան, 0002, ք. Երևան, Ամիրյան 11, բնակարան 24

Հեռ. +374(10) 505 303 Բջջ. +374(98) 505 303, Էլ. Փոստ՝ info@prwb.am, Կայքէջ՝ [www.prwb.am](http://www.prwb.am)



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ազատվում են հայցվորները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3 նախատեսված դեպքերում խոշտանգման հետևանքով պատճառված վնասների փոխհատուցման վերաբերյալ հայցով: Գտնում ենք, որ հանրային իշխանության ներկայացուցիչների կողմից անձանց այլ հիմնարար իրավունքների խախտման դեպքերում ևս հայցվորները պետք է ազատված լինեն իրավունքի խախտման հետևանքով պատճառված վնասների փոխհատուցման վերաբերյալ հայցով պետական տուրքի վճարից՝ հաշվի առնելով դատարանի մատչելիության իրավունքի կարևորությունը խախտված իրավունքի պաշտպանության և վերականգնման համար:

**Առաջարկում ենք**

Հանրային իշխանության ներկայացուցիչների կողմից անձանց խախտված հիմնարար իրավունքների պաշտպանության և դրանց համար վնասների, այդ թվում՝ նյութական և բարոյական, հատուցում պահանջելու գործերով հայցվորներին ազատել պետական տուրք վճարելու պարտականությունից: